ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ և ԲԱՐԲԱՌԸ ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արմեն Սարգսյան
Բ. գ. թ., դոցենտ, ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն

Բանալի բառեր- *ազգագրություն, բանահյուսություն, բարբառ, ուսումնասիրություն, հոդված, քաղաք, գյուղ, ընտանիք, հարսանիք, թաղում, ավանդություն:*

Հայ մշակույթի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Ստեփան Լիսիցյանը: Առանձնապես կարևորվում են նրա ազգագրական ուսումնասիրություններն ու տասնամյակների ընթացքում հարյուրավոր բնակավայրերից գրառած հարուստ նյութերը, ինչը լուրջ հիմք դարձավ գիտության այդ բնագավառի մի շարք հիմնախնդիրների լուծման համար[1]: Նշանավոր գիտնականի ուշադրությունից անմասն չմնաց Արցախը, որի ազգագրական բազմակողմանի քննությունն է ներկայացված անհիմն պատճառներով տասնամյակներ շարունակ ձգձգվելուց հետո[2] տպագրված «Լեռնային Ղարաբաղի հայերը» հիմնարար աշխատության մեջ[3]:

Աշխատությունը սկսվում է *«Հեղինակի կողմից»*[4] նախաբանով, որտեղ Լիսիցյանը տեղեկություններ է հաղորդում ազգագրական ակնարկի ստեղծման հանգամանքների մասին: Ըստ այդ հաղորդման՝ հեղինակը 1924 թվականի ամռանը Անդրկովկասի ԿԳԿ-ին առընթեր Անդրկովկասյան գիտական ասոցիացիայի կազմակերպած գիտարշավի շրջանակներում ազգագրական նյութեր հավաքելու նպատակով մեկնում է Լեռնային Ղարաբաղ: Ստեփանակերտում մարզի ղեկավարության հետ մշակված երթուղիների համաձայն՝ նա ուսումնասիրություններ է կատարում Ասկերանի շրջանի Ավետարանոց, Դաշուշեն, Մարտունու շրջանի Թաղավարդ, Սոս, Գյունե Ճարտար, Գիշի, Ննգի, Հադրութի շրջանի Թաղլար, Տող, Հադրութ, Ծամձոր,

---

[1] Варданян Л., Степан Лисициан и основные проблемы армянской этнографии, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2015, N2, էջ 208-228:

[2] *Այդ մասին մանրամասն տե՛ս* Варданян Л., Степан Лисициан и истоки армянской этнографии, Ереван, 2005, с. 287-292:

[3] Լիսիցյան Ս., Լեռնային Ղարաբաղի հայերը (Ազգագրական ակնարկ), «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1981, էջ 9-84:

[4] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 9-10:

Ջրակոս, Մարտակերտի շրջանի Վանք, Վաղուհաս, Հաթերք,Մաղավուզ, Երից-Մանկունք, Մեծ Շեն, Կուսապատ, Մարտակերտ գյուղերում՝ *«հավաքելով բազմակողմանի հարուստ նյութ»*[1]: Այստեղ հեղինակը հիշատակում է նաև մինչ այդ Արցախի ազգագրության ուսումնասիրության բնագավառում հրատարակված որոշ աշխատանքներ՝ նշելով, որ իր շրջագայության ժամանակ այդ նյութերը ստուգել, տարածապես ընդլայնել և զգալիորեն լրացրել է՝ հատուկ ուշադրություն դարձնելով *«հետհեղափոխական ժամանակաշրջանում (մինչև 1924 թ.) տնտեսական և սոցիալական վերափոխումների հետևանքով ժողովրդի կենցաղում տեղի ունեցած փոփոխություններին»*[2], որոնք, ըստ նրա, ավելի են խորացել հատկապես տնտեսության կոլեկտիվ ձևերին անցնելուց հետո՝ ընդգրկելով տեղական կյանքի բոլոր կողմերը. գրեթե պատմության գիրկն են անցել հին սովորույթները, որոնք մի քանի տասնամյակ առաջ տակավին պահպանվում էին ժողովրդի մեջ՝ կարևոր աղբյուր հանդիսանալով հասարակական զարգացման վաղուց անցած փուլերի ըմբռնման համար[3]:

Առաջաբանին հետևում է *«Աշխարհագրական ակնարկ»* բաժինը[4], որտեղ Լիսիցյանը, լինելով նաև նշանավոր աշխարհագրագետ, առանձին ենթաբաժիններով համառոտ, բայց բովանդակալից ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմանները, ռելիեֆը, գետերը, անտառները, բաժանումն ըստ շրջանների:

Բուն ուսումնասիրությունը բաղկացած է հինգ գլուխներից: Առաջին՝ *«Բնակչությունը»* գլխում[5] հանգամանորեն քննության են առնվում էթնիկ կազմը և սոցիալական խմբավորումը: Հեղինակը Լեռնային Ղարաբաղը համարում է հայկական այն եզակի մարզերից, որոնք դարերի ընթացքում պահպանել են իրենց էթնիկական կազմը, *«որը, սակայն, այստեղ արդեն չի կրում այն ամբողջական բնույթը, որը նրան հատուկ էր մինչև XVII դ. և XVIII դ. կեսերը»*[6]: Ըստ հեղինակի՝ 18-րդ դարի կեսերին մերձկասպյան տափաստանների անասնապահ կիսավաչկատուն ցեղերը՝ջիվանշիրցի Փանահի գլխավորությամբ, հետզհետե ավելի են ձգտում տիրանալ Ղարաբաղի հրաբխային սարահարթի կանաչապատված ալպիական մարգագետիներին, ինչի արդյունքում հիմնվում է *«Ղարաբաղի խանությունը»*, որի կազմավորման հետ էլ մահմեդական տարրերը սկսում են հիմնվել Ասկերանում, Շուշիում և այլ վայրերում՝ զբաղեցնելով ճարահատյալ գաղթած հայ բնակչության

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 9:
[2] Նույն տեղը
[3] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 10:
[4] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 11-15:
[5] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 16-26:
[6] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 16:

տարածքները: Եվ չնայած ռուսական իշխանության հաստատումից հետո հայ գաղթականների մի մասը վերադառնում և վերադարձնում է հին հողերը, այնուամենայնիվ, վերադարձողները քիչ էին և չէին կարող ապահովել հայ բնակչության նախկին խտությունը: Էթնիկ տեղաշարժերից նշվում է նաև 1828 թ. պարսկական Ղարադաղ մարզի հայության մի մասի վերաբնակեցումը Լեռնային Ղարաբաղում, ինչը, սակայն, Արցախի ազգագրական և բարբառային առանձնահակություններում էական փոփոխությունների պարճառ չի դառնում, քանի որ *«այդ տարրերը ամբողջ բնակչության 10% են կազմում, մասամբ էլ այն պատճառով, որ Ղարաբաղի և Ղարադաղի միջև վաղուց ի վեր գոյություն ունեին կենցաղային տեսակետից նրանց մերձեցնող տնտեսական ու մշակութային կապեր»*[1]: Լիսիցյանը հայտնում է, որ իր հետազոտության ժամանակ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը կազմում էր շուրջ 130 հազար մարդ, որից 120 հազարը հայեր էին, 10 հազարը՝ ադրբեջանցիներ, որից միայն 5 հազարը՝ Շուշիում, սակայն չնայած դրան՝ որոշ հանգամանքներ՝ երկարատև հարևանությունը, դարավոր քաղաքական ենթակայությունը պարսկական շահերի գերագույն իշխանությանը, տնտեսական հարաբերությունները մահմեդական ցեղային ավագանու հետ, հիմք են հանդիսացել հայ բնակչության մեջ ադրբեջանահիրանական ազդեցությանը, ինչը դրսևորվում էր տարբեր ձևերով՝ ադրբեջաներենի իմացություն, արևելյան երաժշտության յուրացում, երեխաներին մահմեդական անուններ տալու և այլն:

Այս գլխում առավել խորությամբ են նկարագրվում սոցիալական խմբավորումները, հատկապես՝ ռուսական գերիշխանության ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում դասային հարաբերությունների արմատական փոփոխությունները, որի արդյունքում պարսկական հասարակական դասային խմբավորումները, տնտեսական և քաղաքական նոր պայմաններում քայքայվելով, իրենց տեղը զիջեցին նոր ձևերին: Դա առաջին հերթին անդրադարձավ մելիքների հետնորդների վրա, որոնք, ինչպես և խաները, զրկվեցին իրենց հրապարակային- իրավական արտոնություններից, ինչը անցավ նոր աստիճանավորությանն ու զինվորական իշխանությանը, իսկ մելիքների ժառանգները, ցարական իշխանության քաղաքականության արդյունքում զինվորական կրթություն ստանալով ռազմական տարբեր ուսումնարաններում ու կադետային կորպուսներում, ստացան սպայական կոչումներ՝ հաճախ հասնելով բարձր աստիճանների: Այսպես, մելիքական տոհմերի ներկայացուցիչները և նրանց երբեմնի հպատակներից շատերը, զրկվելով իրենց հողերի մեծ մասից, հեռանում են գյուղերից և հաստատվում քաղաքներում՝ լրացնելով ոչ միայն սպաների, այլև աստիճանավորների, ազատ մասնագիտության տեր անձանց ու արդյունաբերողների շարքերը, իսկ իրենց

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 17:

հողամասերը վարձակալությամբ հանձնում գյուղացիներին: Այս ամենը հանգեցրին ազնվականության հասարակական դերի թուլացմանը, ինչի պատճառով էլ մասնավոր տիրույթային կալվածատիրական հողերի ազգայնացումը Լեռնային Ղարաբաղում չուղեկցվեց գյուղի աշխատավոր տարրերի հակաազնվականական ցասման այնպիսի բռնկումներով, ինչպես Վրաստանում[1]:

Դասային քայքայումից անմասն չմնաց նաև հոգևորականությունը: Նոր պայմաններում գյուղական համայքների սահմանները ընդարձակվեցին վանքապատկան հողերի հաշվին, արդյունքում հոգևորականության եկամուտները նվազեցին, սահմանափակվեցին բարեպաշտական նվիրատվությունները, ինչն էլ հանգեցրեց բազմաթիվ միաբանությունների վերացմանը: Այս շրջանում փակվեց Աղվանից կաթողիկոսությունը՝ վերածվելով սովորական թեմի՝ սկզբում մետրոպոլիտի, այնուհետև եպիսկոպոսի իշխանությամբ, իսկ հոգևոր կառավարումը Գանձասարից տեղափոխվեց Շուշի: Մյուս կողմից՝ հոգևորականների զավակները *«ձգտում էին առավել եկամտաբեր և պատվաբեր զբաղմունքների, քան եկեղեցական արարողությունների կատարումն էր՝ իրենց համար պարտադիր չհամարելով այն հաստատված կարգը, ըստ որի՝ որդին ժառանգում էր հոր հոգևորական կոչումը»*[2]: Ուսում ստանալով քաղաքներում՝ նրանք հաճախ չէին վերադառնում իրենց դասը՝ ծառայության մտնելով կառավարական հիմնարկներում, ավելի հազվադեպ՝ բանակում: Հոգևորականների հեղինակությունը ավելի մեծ անկում ունեցավ խորհրդային կարգերի հաստատումից հետո. դրան զուգընթաց գյուղից հեռանում էին մեծ թվով արհեստավորներ,՝ վաստակ փնտրելով Շուշի, Գյանջա, Նուխի, Շամխոր, Գրոզնի, Թիֆլիս և այլ քաղաքներում: Արդյունքում՝ հին սոցիալական խմբավորումների քայքայմանը զուգահեռ, ձևավորվում են մանր և խոշոր առևտրականների, ձեռնարկատերերի, գնորդների խավերը, զարկ է տրվում օղեթորմանն ու շերամապահությանը, հիմնվում են մետաքսագործական ֆաբրիկաներ:

Հեղինակը անդրադառնում է նաև ուսումնական հաստատությունների վիճակին՝ նշելով, որ քաղաքացիական պատերազմի նախօրեին դրանց թիվը Լեռնային Ղարաբաղում չէր հասնում 50-ի, որից միայն Շուշիում գործող թեմական դպրոցն ու ռեալական ուսումնարանն էին միջնակարգ, որոնց, ինչպես նաև այլ նմանատիպ և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտները, հայրենիքում աշխատանք չգտնելով, բնակություն էին հաստատում Անդրկովկասի, Անդրկասպիայի և Ռուսաստանի այլ մասերի

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 18:
[2] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 20:

տարբեր քաղաքներում՝ ներգրավվելով տեղի արդյունաբերական և մշակութային կյանքում:

Նշված գլխի *«Հայերն ու հարևանները»* բաժնում[1] ներկայացվում է հայերի և ադրբեջանցիների (որոնք մինչև հեղափոխությունը պաշտոնապես կոչվում էին թաթարներ) հարաբերությունները, որոնք ռուսական տիրապետության շրջանում էլ ավելի լարվեցին՝ հանգեցնելով արյունալի ընդհարումների: Հիշատակվում են Շուշու 1905 և 1920 թվականների, Շուշուց քիչ ներքև գտնվող հայկական Քայրալիքենդ գյուղի 1919 թ. կոտորածները:

Աշխատության երկրորդ գլուխում՝ *«Քաղաքը և գյուղը»*[2], հեղինակը տալիս է կարևոր տեղեկություններ Շուշի և Ստեփանակերտ քաղաքների, գյուղերի, տների, ագարակների, արցախցիների արտաքինի ու հագուստի մասին:

Շուշին բնակիչները կոչում են *Ղալա* (բերդ), իսկ իրենց՝ *ղալաղցի* (բերդի բնակիչներ): Լիսիցյանը վկայակոչում է որոշ ծերունիների, որոնք էլ, վկայակոչելով իրենց հայրերին, պնդում են, որ մինչև Փանահ խանի մուտքը, այդտեղ եղել է բնակավայր՝ արհեստանոցներով և առևտրական կրպակներով: Հեղինակը Շուշին ներկայացնում է որպես տնտեսական մեծ նշանակություն ունեցող կենտրոն, որտեղ զարգացած էին արհեստները, առևտուրը, արդյունաբերությունը, մշակույթը, տպագրական գործը, ուսումը: Այն նաև նշանավոր ամառանոց էր, հատկապես՝ այլ վայրերում ապրող շուշեցիների համար: Քաղաքը բաղկացած էր չորս հիմնական թաղերից՝ Ագուլեցոց, Ղազանչեցոց, Թավրիզեցոց և Մեղրեցոց, որոնց բնակիչները հիմնականում այստեղ են տեղափոխվել համապատասխան վայրերից: Դրանցից յուրաքանչյուրը հայրենակցական սկզբունքով համախմբված էր իր եկեղեցու շուրջն ու մինչև ռուսական քաղաքային կարգի հաստատումը կառավարվում էր իր թաղային կազմակերպությամբ: Շուշիի բնակչությունը 1823 թ. յոթ հազարից 1914 թ. հասել էր 25 հազարի, և *«այն Անդրկովկասյան Հայաստանում բացարձակապես գյուղատնտեսական զբաղմունքներից կտրված զուտ քաղաքային տիպի միակ բնակավայրն էր»*[3]:

Սակայն, ինչպես նշում է Լիսիցյանը, Շուշու հրդեհից հետո նոր կենցաղի առաջացման համար քաղաքային տարրի նշանակությունը խիստ նվազում է: Վարչական կենտրոնը տեղափոխվում է Ստեփանակերտ, որը 1927 թվականին ուներ շուրջ երեք հազար բնակիչ, երևան են գալիս առևտրաարդյունաբերական նոր կենտրոններ, ինչպիսիք են՝ Մարտակերտը և Հոնաշենը, Լեռնային Ղարաբաղին սահմանակից Աղդամ և Կորյագինո գյուղերը: Այստեղ տեղեկություններ են տրվում նաև արտագնացության մասին, նշվում է, որ մեծ

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 24-26:
[2] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 27-37:
[3] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 29:

թվով գյուղացիներ գյուղատնտեսական անբարենպաստ պայմանների (հատկապես Դիզակում և Վարանդայում) պատճառով արտագնա աշխատանքի էին մեկնում Դաշտային Ղարաբաղ և Մուղանի տափաստան (հերկի և բերքահավաքի ժամանակ), բայց հատկապես՝ Բաքու, Գրոզնի և այլ քաղաքներ, որտեղ աշխատանքի էին տեղավորվում գործարաններում, ֆաբրիկաներում, խանութներում, շինարարությունում և պետական ու մասնավոր այլ ծառայություններում՝ սովորաբար գարնանը վերադառնալով և սկսելով դաշտային աշխատանքները, որոշներն էլ *«շահավետ էին համարում չթողնել քաղաքային աշխատանքը, իսկ գյուղի դաշտային աշխատանքները կատարել՝ կիսարարային կամ վարձակալական այլ սկզբունքներով աշխատուժ վարձելով»*[1]: Արտագնաց գյուղացիները վերադառնալով քաղաքային տարբեր սովորություններ էին տարածում գյուղերում, ինչի ազդեցությամբ աստիճանաբար փոփոխվում է գյուղի պատկերը, հատկապես՝ հագուստը և կահկարասին:

Լեռնային Ղարաբաղում, ըստ Լիսիցյանի նկարագրության, գյուղերը տեղաբաշխված էին հովիտների ու կիրճերի բարձրաբերձ լանջերին, ուղղաձիգ ժայռերի *(քերծ)* մոտ, ինչի գլխավոր պատճառներն են պաշտպանական նպատակահարմարությունները և աղբյուրների մերձավորությունը: Տները ցրված էին անկանոն զանգվածներով, չունեին որևէ հստակ հատակագիծ, բայց կրում էին հին ազգատոհմային խմբավորումների հետքերը, չնայած նոր ընտանիքներն արդեն տուն կառուցելու համար ազատ հողամասեր էին ընտրում ազատոհմային թաղամասերից հեռու՝ գյուղի ծայրամասում՝ այնքան էլ հաշվի չառնելով ազգակցական կապերը: Որպես ամենուր հանդես եկող հնաձև տուն՝ նկարագրվում է *դարադամը (սև տուն)*[2], որն իր տեղը հետզհետե զիջում էր նոր, հաճախ երկհարկանի, թիթեղածածկ կամ կղմինդրածածկ տանիքներով և պատշգամբավոր տներին, որոնց ստորին հարկը ծառայում էր տնտեսական նպատակների, իսկ վերինը՝ բնակելի, թեև ամռանը բնակիչները գերադասում էին բնակվել ստորին հարկում, որտեղ ավելի զով էր: Մարագները, գոմերը և այլ կառույցներ շինվում էին տներից քիչ հեռու՝ ծածկվելով ծղոտով կամ եղեգով:

Հաճախ գյուղացիները իրենց ժամանակի մեծ մասն անց էին կացնում տնից հեռու՝ դաշտերին կից սարքված կալերում կառուցված ժամանակավոր բնակատեղերում, որոնք ժամանակի ընթացքում վեր են ածվում մշտական բնակավայրերի: Ըստ հեղինակի՝ նման ագարակներ են առաջացել Գյունե Ճարտար, Սոս, Թաղավարդ հին գյուղերի մոտ: Դրանցից շատերը դեռևս չունեին

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 31:

[2] Ղարադամի առավել մանրամասն նկարագրությունը հեղինակը տվել է իր «К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам)» հոդվածում,«Известия Кавказского историко-археологического института», Тифлис, 1925, т. 3, с. 97-108):

հատուկ անուններ և պարզապես կոչվում էին *կալեր*: Ագարակներ էին ստեղծվում նաև գյուղերից հեռու այն վայրերում, որտեղ գյուղացիները, գոմեր կառուցելով, ձմռանը պահում էին անասունները: Արդյունքում այդ ագարակները վեր էին ածվում առանձին գյուղերի: Լիսիցյանը նշում է, որ այդպես Վաղուհաս գյուղից առանձնացել է Հարությունագոմեր, Առաջաձորից՝ Պողոսագոմեր և Վըրսըկյումեր, Կուսապատից՝ Դամրլու, Հորաթաղ և Մարտակերտ, Կալադարասուց՝ նոր Կալադարասի, Խրխան, Կորազերք, Կանաչ թալա, Չոբան-Գոնե գյուղերը, իսկ Ավետարանոց գյուղից Ալամանց կյումեր, Մըրգումանց կյումեր, Պլկանանց կյումեր և Հասանանց կյումեր գյուղերի անջատման պատճառն այն էր, որ մելիքները այդտեղ գտնվող գոմերում վերաբնակեցրել էին առավել բազմանդամ ընտանիքներին[1]:

«Տան կահավորումը» խորագրի տակ ներկայացվում է տան կահավորումը, ամանեղենը, ուտեստը: Լիսիցյանը նշում է, որ 20-րդ դարի քսանական թվականներին դարադամ են թափանցել ճենապակե ափսեներն ու արծաթազօծ գավաթները, դանակները, պատառաքաղները, վիեննական ճկաթոռը, իսկ նոր տներում հին կահավորումից ոչինչ չի մնացել: Այդտեղ սենյակները տաքացնում էին բուխարիկներով կամ թիթեղե վառարաններով, մուտք էր գործել քաղաքային կահույքը: Նկարագրության համաձայն՝ կահավորման ամենագնահատելի մասը կրկին կազմում էին գորգերն ու անկողինը, խոհանոցային ամանեղենը մեծ մասամբ պղնձից էր, գերակշռում էին Անդրկովկասի հայ բնակչության մեջ լայնորեն տարածված կոնաձև կաթսաները, երկար բռնակով խոր թավաները, ծանր քամիչները: Ուտեստից հիշատակվում են բանջարեղենը, փլավը, ձվածեղը, կոլոլակը, քյուվթան, տոլման, քաղցրավենիքից՝ կաթնահունցը, գաթան, բարակ քաղցր բլիթները, հացի տեսակներից՝ պռոզը, որը, շնորհիվ փայտի առատության, թխվում էր երկու-երեք օրը մեկ անգամ և այլն: Հայտնվում է նաև, որ բանջարեղենից կարտոֆիլը համեմատաբար նոր էր տարածվել, սմբուկ չէր հանդիպում, թռչուններից շատ էին հավերը, իսկ սագեր ու բադեր իսպառ չկային, կովերի փոխարեն շատերը գերադասում էին այծ պահել, որի պատճառով ամենուր զգացվում էր պանրի, կարագի, մածնի, մսի պակասը: Հաջորդ՝ *«Արտաքինն ու հագուստը»,* բաժնում[2] մեծ ազգագրագետը անդրադառնում է ղարաբաղցի հայերի արտաքին տեսքին, սանրվածքին և հագուստի նկարագրությանը: Համեմատելով այլ վայրերի հայերի հետ՝ նշվում են արցախցիների արտաքինի առանձնահատկությունները՝ բարձր հասակը, ավելի սպիտակ մաշկը, բաց գույնի մազերը, ուղիղ կեցվածքը, դուրս ցցված փորի գրեթե բացակայությունը, թեթև ու արագ քայլվածքը, արագ խոսելաձևը և այլն:

[1] Լիսիցյան Ս., Լեռնային Ղարաբաղի հայերը, էջ 34:
[2] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 35-37:

Նշվում է, որ վերացել է տղամարդկանց սափրած գլխին մազափունջ (քյաքուլ) և երեխաների ճակատի մեջ տեղը թել թողնելու սովորությունը, մինչդեռ կանանց սանրվածքն ավելի պահպանողական էր. աղջիկները, ինչպես և ամուսնացած կանայք, մազերը չորս հյուս էին անում՝ երկուսը ետ գցելով մեջքին, երկուսը՝ կրծքին:

Հաղորդվում է, որ տնայնագործության մեջ որպես հիմնական հումք գործածվում էր բուրդը, աստիճանաբար տարածվում էր բամբակը, իսկ մետաքսը լայն գործածություն չուներ, քանի որ տեղի ջուլհակային տեխնիկան մետաքսե նուրբ գործվածքներ ստանալու հնարավորություն չէր տալիս: Տղամարդկանց հագուստից հիշատակվում է արխալուղը, չուխան, կուլբան (գուլպա) ոչխարի մորթուց կարված լայն կոնաձև փափախը, քուլքը, յափնջին (այծենակաճ), տրեխը, քոշը (երեսը բաց կրնկավոր կիսակոշիկ), կանացի հագուստից՝ երկար ներքնաշապիկը, խոնջանը, երեք քղանցք ունեցող արխալուղը, մետաքսե լայն գոտին, քուլքը, որոնք սակայն հետզհետե իրենց տեղը զիջում էին քաղաքներից մուտք գործած նոր ձևերին. *«Նույնիսկ գյուղերում այժմ հագվադեպ են հին տարազը կրում, եթե հագնում էլ են, ապա միայն պառավներն ու հիսունն անց կանայք: Ավելի երիտասարդներն արդեն ազատվել են դրանցից»*[1]:

Ընտանեկան ու հասարակական հարաբերություններին, բարքերին ու ծեսերին է նվիրված աշխատության երրորդ՝ *«Ընտանիքը»* գլուխը[2], որի առաջին՝ *«Բաժանք»* բաժնում տրվում են ընտանիքի հոր մահից հետո, նույնիսկ նրա կենդանության օրոք ունեցվածքի բաժանման ձևերը, ընտանիքի անդամների փոխհարաբերությունները, դրանցից յուրաքանչյուրի տեղն ու դիրքը ընտանիքում: Բաժանքի ժամանակ սկզբում առանձնացվում էր չամուսնացած եղբայրների ու քույրերի բաժինը. Քույրերը ստանում էին այն, ինչ հասնում էր օժիտով՝ սպիտակեղեն, հագուստեղեն, անկողին՝ *խարջ*, իսկ եղբայրները՝ հիմնականում անկողնային սպիտակեղեն՝ *ազապ հախք,* և այն, ինչ նախատեսվում էր նրանց հարսանիքի ծախսերի համար: Այրի մայրը, ով ամուսնու մահից հետո հաճախ մնում էր ավագ, երբեմն էլ՝ կրտսեր որդու մոտ, նույնպես ստանում էր որոշակի գումար, մնացած ունեցվածքը բաժանվում էր ամուսանցած եղբայրների միջև, իսկ եթե հայրը ողջ էր, նրա բաժինը չէր գերազանցում որդիների բաժնին: Տունը բաշխվում էր կա՛մ վիճակ գցելով, կա՛մ փոխադարձ համաձայնությամբ:

Ըստ հաղորդման՝ նախահեղափոխական Արցախում *«նույնիսկ բաժանված անհատական ընտանիքում ներքին փոխհարաբերությունները որոշվում էին հոր և մոր հնավանդ հեղինակությամբ, կրտսեր անդամների անձի լրիվ ճնշմամբ,*

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 37:
[2] Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 38-52:

ինչպես նաև կնոջ ստորադրյալ վիճակով»[1]: Ընտանիքի գլուխ էր կանգնած հայրը, ով բաշխում էր աշխատանքը՝ միաժամանակ ընտանիքի լիազոր ներկայացուցիչը հանդիսանալով հավաքույթներում, ժողովներում, հարսանիքներում, թաղման և այլ միջոցառումների դեպքում: Նրան ենթարկվում էին բոլորը, և միայն հոր ծերության ու տնտեսությունը վարելու անկարողության դեպքում իշխանությունը փոխանցվում էր որդուն: Սակայն տան լիիրավ իշխանությունը պատկանում էր մորը, ով *«առանց վերահսկողության տնօրինում էր բոլոր պաշարները, կանանց մեջ բաշխում էր տնային բազմաթիվ աշխատանքները, հետևում ամեն մի անդամի վարք ու բարքին»*[2]: Հեղինակը շեշտում է այն համերաշխությունը, որ տիրում էր արցախյան ավանդական ընտանիքում և ընդհանրապես գերդաստանում, չնայած լինում էին նաև երիտասարդների ըմբոստության դեպքեր: Առավել ստորացված էր կնոջ վիճակը, ով սկեսրայրի և քավորի հետ չէր խոսում մինչև մահ, սկեսրոջ հետ՝ մինչև առաջին երեխայի ծնվելը, տեգրոջ հետ՝ տասը տարի և ընդհանրապես զրկված էր բազում ազատություններից ու դատապարտված լռության: Նա հաճախ էր նախատվում և նույնիսկ ծեծվում սկեսրոջ կողմից՝ չհամարձակվելով հակաճառել: Եվ պատահական չէ, որ ընտանիքում տղայի ծնունդը դիմավորում էր համընդհանուր շնորհավորանքներով, իսկ աղջկա ծնունդը համարվում էր դժբախտություն:

Լիսիցյանը անդրադառնում է նաև հեղափոխությունից հետո նոր կարգերի հաստատման արդյունքում առաջացած ընտանեկան հարաբերությունների փոփոխություններին՝ նշելով, որ ընտանեկան տարաձայնությունները ավելի հաճախակի էին դառնում հատկապես վաղ ամուսնությունների արգելումից հետո, և եթե նախկինում աղջիկն ամուսնանում էր 12-14 տարեկանում և որպես չկազմակերպված և չզարգացած էակ՝ հեշտությամբ համակերպվում նոր իրադրությանը, ապա 16 տարին կանանց ամուսնական նվազագույն տարիք սահմանելուց հետո հարս գնացած աղջիկն, ունենալով ձևավորված խառնվածք և հակումների որոշակի ինքնուրույնություն, այլևս չէր հանդուրժում նոր ընտանիքում բռնակալությունն իր նկատմամբ: Փոխվում են նաև ընտանիքի ավագ և կրտսեր անդամների փոխհարաբերությունները. երիտասարդներն ավելի ու ավելի ակտիվորեն են միջամտում ընտանեկան և այլ հարցերի լուծմանը: Դրան զուգընթաց ավելի հաճախակի են դառնում ամուսնական հավատարմության խախտման դեպքերն ու կողմնակի սիրային կապերը, որի հիմնական պատճառներից նշվում են արտագնաց ամուսինների բացակայությունները, ամուսնու երկարատև զինվորական ծառայությունը, բռնի

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 39:
[2] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 39:

ամուսնությունը, մետաքսամանման գործարաններում տղամարդկանց ու կանանց համատեղ աշխատանքը և այլն:

Նոր կարգերը էական փոփոխությունները չեն մտցնում արցախցու ավանդական հյուրասիրության մեջ. *«Սովորույթը պատվիրում է ընդունել հյուրին՝ ամենայն հոգատարություն ցուցաբերելով նրա նկատմամբ: Սակայն ամենուր չէ, որ տանտերն առաջվա սիրալիրությունն է ցուցաբերում...»*[1]:

«Հարևանները» խորագրի տակ վեր են հանվում գյուղական նույն համայնքի մեջ ընդգրկված ընտանիքների և հատկապես՝ հարևանների փոխհարաբերությունները: Որպես փոխօգնության կարևոր ձև է նկարագրվում հրաքաշը. *«Հրաքաշը գյուղատնտեսական աշխատանքներում կենդանի (եզների) և անկենդան (գութանի) գույքի ու աշխատավոր ձեռքերի միավորումն է, ընդսմին, ամբողջ հաշիվն արվում է՝ եզներն ընդունելով որպես միավոր: Աշխատողն ընդունվում է որպես մեկ եզ, գութանը՝ երկու (այն գյուղերում, որտեղ գութանները շատ կատարելագործված են՝ որպես մեկ): Որոշ դեպքերում միավորումը սահմանափակվում է մեկ հերկով, որից հետո միացյալ ուժերով մշակված ամբողջ տեղամասը՝ հերթքշվէ ցիլը (հրաքաշի ցելը), քանդիրի՝ պարանի օգնությամբ, ըստ եզնահաշվի, բաժանվում է մասնակիցների միջև: Այնուհետև ամեն մեկը ցանում է իր դաշտն ու հավաքում բերքը: Հրաքաշի մեկ այլ հաշվարկի դեպքում եզնամիավորի հաշիվը փոխանցվում է օրերի հաշվին, և ամեն մասնակցի դաշտը վարվում է առանձին՝ նրան հասանելիք օրերի հաշվով: Եթե կողմերից մեկը լրիվ չէր օգտագործում իրեն հասանելիք օրերը, մնացած ժամանակը կարող էր վաճառել մյուսին, իսկ եթե վարը նախատեսվածից ավելի շատ ժամանակ էր խլել, դրա դիմաց դրամ էր մուծում ամբողջ միավորմանը կամ էլ որևէ մեկից գնում էր նրա ավել օրերը»*[2]: Հիշատակվում է նաև ավելի երկարատև միավորումների մասին, որոնց դեպքում յուրաքանչյուրը սերմացու էր բերում իր եզների թվի հաշվով, և բոլոր աշխատանքները համատեղ կատարելուց հետո ամբողջ բերքը բաժանվում էր եզնամիավորի հաշվին համաձայն:

Փոխօգնության մեկ այլ ձև է *միջին*, որը, ի տարբերություն նախորդի, բնութագրվում է որպես *«դաշտային, այգեգործական, կամ տնային գործերում միմյանց անձնական աշխատանքով կամ գործիքներով օգնելու ձև, որն առկա էր ինչպես հարևանների և բարեկամների, այնպես էլ համայնքի բոլոր անդամների միջև»*[3]:

Բարոյական պարտք էր համարվում նաև աղքատներին օգնելը:

---

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 42:
[2] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 43:
[3] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 44:

«Հարսանիք» բաժնում մեծ ազգագրագետը հանգամանալից նկարագրում է ընտանիքի ստեղծման այդ կարևոր երևույթի ամբողջական գործընթացը: Համառոտակի անդրադառնալով հարսնախոսությանը՝ նա նշում է, որ հարսանիքի օրը և նյութական պայմանները պարզելու նպատակով աղջկա հոր տանը նշանդրեք էր նշանակվում՝ երկու կողմերի ամենամոտ ազգականների մասնակցությամբ ու գյուղի տանտիրոջ, հոգևորականի, քավորի ներկայությամբ, որը կոչվում էր *հրդէ կըտրիվ*: Որոշվում էին փեսայի ընտանիքի կողմից հարսնացուի ընտանիքին տրվելիք նվերները և հարսանիքի ծախքերը հոգալու համար նախատեսված մթերքները, ինչպես նաև հարսնացուի օժիտի պարունակությունը, որի մեջ մտնում էին հագուստեղենը, անկողնու, խոհանոցային պարագաներ, գորգեր, սնդուկ, մափրաշ (գորգագործ պարկ անկողնու համար): Բուն հարսանիքը տեղի էր ունենում աշնանը կամ ձմռանը՝ դաշտային աշխատանքներն ավարտելուց հետո, հատկապես՝ Բարեկենդանին, և սովորաբար տևում էր երեք, երբեմն՝ յոթ օր, ընդ որում՝ ձգտում էին սկսել ուրբաթ օրը, որպեսզի վերջին կիրակի օրը գյուղացիներն ավելի ազատ լինեն և կարողանան ավելի մեծ կազմով մասնակցել խնջույքին: Այնուհետև նկարագրվում են հարսանիքի նախապատրաստական աշխատանքներն ու ծեսերը, հյուրերին հրավիրելու ձևերը: Հատուկ հանդիսավորությամբ էին հրավիրում քավորին՝ մատուցելով նվերներ: Երեկոյան փեսայի տանը զուռնայի նվագի տակ սկսվում էր հարսանեական սկզբնական խնջույքը՝ օղու և գինու առատ գինարբուքով, որը ղեկավարում էր հարսանիքի տնօրենը՝ *թոյբաշին* կամ *թամադան*, ով սովորաբար լինում էր փեսացուի փեսան կամ հորեղբոր տղան: Դրան հետևում էին փեսայի ու նրա ընկերների՝ *մակարների* սափրման ու փեսայի հագուստի օծման արարողությունները, որից հետո մակարների խումբը՝ ղեկավարի՝ *մակարբաշու* գլխավորությամբ, դաշույներով, թրերով կամ հրազենով զինված, փեսայի և մյուս հարսանիքավորների հետ գնում էին հարսի տուն: Հարսնացուի հայրական տանը, ըստ հաղորդման, խնջույքը շարունակվում էր մինչև առավոտ կամ ուշ գիշեր: Առավոտյան քահանայի կողմից տեղի էր ունենում հարսի պսակազգեստի օծումը՝ *քրթէթ օրհնէքը*, որից հետո նրան հագցնելով՝ գնում էին եկեղեցի: Եկեղեցու մոտ մակարների պահակախումբ էր կանգնեցվում, որպեսզի ոչ-ոք չհամարձակվեր կտուրը քար նետել և դրանով հարսին անպտուղ դարձնել: Թոյբաշին քահանային էր հանձնում գյուղի տանտիրոջ տերողորման՝ որպես վկայություն նրա համաձայնության: Պսակադրությունը կատարվում էր եկեղեցում, իսկ եթե գյուղում եկեղեցի չկար՝ թոնրի մոտ: Եկեղեցուց հարսանեկան թափորը շարժվում էր դեպի սուրբ օջախները, որտեղ մոմ վառելով, խունկ ծխելով և սրբությունները համբուրելով՝ վերադառնում էին հարսի ծնողների տուն՝ ճանապարհին հյուրասիրվելով երիտասարդ զույգի բարեկամների կողմից: Հարսի հայրական տանը մասնակցելով կազմակերպված խնջույքին՝ խումբը վերջապես ուղևորվում էր

փեսայի տուն, որտեղ առատ խնջույքը շարունակվում էր մինչև ուշ գիշեր, իսկ հաջորդ օրը տեղի էր ունենում մեծարման հանդեսը, որը կոչվում էր *մեծարք*, որին էլ հաջորդում էր *կանչը*[1]: Վերջապես տերտերը քավորի ներկայությամբ փեսայի ու հարսի վրայից հանում էր եկեղեցում նրանց վրա կապած նարոտը՝ *կընընչկարմուրը*, և նրանք իրավունք էին ստանում՝ ամուսնական մահիճ մտնելու: Ամուսնական գիշերը հարսին և փեսային թողնում էին մենակ: Հաջորդ օրը առավոտյան ընտանիքի կանայք և քավորը, ստուգելով հարսի անարատությունը, դրա ապացույցը հանդիսացող ամուսնական սավանը շնորհավորանքներով ուղարկում էին հարսի ծնողներին, իսկ հարսի մայրը մեկ շաբաթ անց գալիս էր դստերը լողացնելու՝ *կըլխըլվա*:

Հարսանեկան այս ամբողջ գործընթացը ներկայացնելիս Լիսիցյանը անդրադառնում է դրանում ընդգրկված մի շարք ծեսերի և մանրամասների: Նշվում է նաև, որ քառասուն օր երիտասարդ զույգը անմաքուր էր համարվում, կինը գրեթե տնից դուրս չէր գալիս, իսկ ամուսինն իրավունք չուներ հարսանիք գնալու, ծննդկանի տուն մտնելու, նույնիսկ կտուրով անցնելու, գոմ մտնելու: Այս շրջանը կոչվում էր *քրռասունք*:

Առանձին բաժիններ են կազմում ծննդյան և կնունքի, թաղման և հոգեհացի նկարագրությունները: Հեղինակը դարաբաղցի հայուհու ամենամեծ դժբախտությունը համարում է անպտուղ լինելը, որի վերաբերյալ կասկածներ առաջանալուն պես հարսը ապավինում էր հեքիմներին, կախարդներին, վհուկներին, աղոթքներին ու ուխտատեղիներին: Երկունքի ցավերը սկսվելու դեպքում տղամարդկանց տնից դուրս էին հանում, իսկ տատմոր հետ մնում էին պառավներն ու մերձավոր ազգականուհիները, ովքեր, հավատալով, որ ծննդի ժամանակ ծննդկանի շուրջ բոլորը չար ոգիներ՝ *քաշկեր* են բնակվում, տարբեր ծեսերով ձգտում էին վնասազերծել դրանց, հատկապես, երբ ծնունդը ձգձգվում էր: Երեխայի ծնվելու մասին անմիջապես տեղեկացնում էին բարեկամներին ու մերձավորներին, առաջին հերթին՝ քավորին, որոնք իրենց ուրախությունն արտահայտում էին՝ տարբեր ուտեստներ ուղարկելով: Հատկապես մեծ ուրախություն էր, երբ արու զավակ էր ծնվում, որի դեպքում *«տատմերը աչքալուսանքով (մըշտըլըդ) հոր մոտ էր գնում ու կատակով գդակը նրա գլխից խլելով՝ գետնով էր տալիս և նվեր (դրամ, թաշկինակ, թել և այլն) պահանջում»*[2]:

Ծննդաբերությունից հետո կինն համարվում էր չարքերով համակված և մինչև երեխայի կնունքը իրավունք չուներ ընդհանուր սպասքից օգտվելու, կար ու ձև անելու, նույնիսկ երեխային կպչելու, որին այդ ընթացքում լողացնում էր տատմերը կամ տան պառավներից մեկը:

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 49:
[2] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 50:

Կնունքը սովորաբար կատարվում էր եկեղեցում, երբեմն՝ տանը՝ թոնրի շուրջը, ծննդից մեկ շաբաթ անց: Տերտերը երեխային անուն էր տալիս, որը լինում էր կա՛մ ծնողների ընտրությամբ, կա՛մ ըստ օրացույցի այդ օրը ծնված սրբի անուն, կա՛մ էլ որևէ հերոսի ու անվանի գործչի անուն, մինչդեռ *«կենդանի պապի կամ տատի օրոք նրանց անունները երեխաներին չէին տրվում, իսկ եթե տրվում էին էլ, ապա չէին հորջորջվում, այլ փոխարինվում էին քնքշացնող, աղճատված, պայմանական ձևերով»*[1]:

Լիսիցյանը նշում է նաև, որ մինչև *քառասունքը* (քառասուն օրը) լրանալը երեխան ավելի էր ենթակա չար բժժանքների, ահա թե ինչու խիստ զգուշանում էին նրա և օտար մարդկանց, նույնիսկ հարազատ հոր շփումներից: Միայն քառասունքն անց ծննդկանին լողացնում էին ծղոտի վրա, ծղոտը այրում, որից հետո մորն ու մանկանը ուղեկցում էին եկեղեցի, որտեղ տերտերն աղոթքով կատարում էր վերջնական սրբագործումը:

Թաղման ու հոգեհացի արարողությունները նույնպես ուղեկցվում էին զանազան ծեսերով: Երազում հանգուցյալ բարեկամին տեսնելը համարվում էր մոտալուտ մահվան նշան, իսկ մահամերձի զառանցանքը՝ զրույց հանգուցյալ բարեկամների հոգիների հետ: Հավատում էին, որ հոգին մարմնից հեռանալիս ճիչ է արձակում, որը տեսանելի է միայն բարեպաշտներին: Նկարագրվում է, որ մահվանից անմիջապես հետո հավաքվում էին բարեկամներն ու ազգականները, տերտերը օրհնում էր պատանն ու հանգուցյալին լողացնելու ջուրը: Հանգուցյալին լողացնելուց հետո ձեռքերը կրծքին խաչելով՝ փաթաթում էին կարպետի մեջ և, հյուսած պատգարակի՝ *նաժի* վրա, իսկ նոր ժամանակներում՝ դագաղի մեջ դնելով, տեղափոխում եկեղեցի: Հուղարկավորությունից առաջ բարեկամուհիները, հարևանուհիներն ու հատուկ հրավիրված եղերամայրերը նստում էին դիակի շուրջը և սկսում ողբը՝ թվարկելով հանգուցյալի արժանիքները, նրա վերաբերմունքն ընտանիքի անդամների և հարևանների հանդեպ, տարբեր դեպքեր ու խոսքեր հիշելով նրա կյանքից: Նկարագրության համաձայն՝ թաղման արարողությունը կատարվում էր եկեղեցական ավանդույթներով: Ննջեցյալին գերեզմանոց էին ուղեկցում միայն տղամարդիկ և գերեզման իջեցնում պատանած կամ դագաղի մեջ դրած: Մերձավոր բարեկամներից որևէ մեկն առաջինն էր, նախօրոք տերտերին խաչով օրհնել տալով, մի բուռ հող նետում փոսը, որից հետո մնացածները նույնն էին անում: Դրանից հետո տան ավագի հրավերով բոլորը մասնակցում էին կազմակերպված հոգեհացին՝ *ժըմահաց*, որտեղ ճաշակելով ոչխարի կամ տավարի մսով եփած *կուրկուտ* (ցորենի ձավար) և գինի ու օղի՝ հանգուցյալի մասին տարբեր հիշողություններ էին պատմում, իսկ հաջորդ օրը հանգուցյալի գերեզմանին այցելում էին կանայք: Համառոտ նկարագրվում են նաև հանգուցյալի մահվան

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 50:

յոթերորդ օրը (*օխնը*) և տարին լրանալու կապակցությամբ կատարվող արարողությունները և ծեսերը:

Ուսումնասիրության *«Հավատալիքները»* գլխի առաջաբանում[1] նշանավոր ազգագրագետը անդրադառնում է ղարաբաղցի հայի հավատալիքների բարդ համակցության ծագումնաբանությանը՝ փորձելով դրանց մի մասը կապել հեթանոսական, զրադաշտական, ինչպես նաև արևելքում և արևմուտքում տարածված մինչմազդեզական հավատալիքների հետ, միաժամանակ նշելով, որ *«առկա նյութերն առայժմ այնքան թերի են, որ համեմատական ազգագրության շատ հարցեր տակավին կարելի է միայն նշել, բայց ոչ ամենևին վերջնական լուծում տալ»*[2]:

«Ուխտավայրերը» բաժնում[3] առանձին խորագրերի տակ ներկայացվում են սրբացված լեռնագագաթները, պուրակները, աղբյուրները, նահատակները, օջախները և կենդանիների պաշտամունքը:

Ինչպես նշում է հեղինակը, *«լեռնագագաթների երկրպագումը, բնականաբար, առաջնակարգ տեղ է գրավում: Չկա շատ թե քիչ բարձր մի լեռ, որի կատարին սուրբի (սօրբի) կամ խաչ չլինի»*[4]: Նման բարձունքներից նկարագրվում են Մռավ լեռը, Դիզափայտը, Մեծ և Փոքր Քիրսերը, պուրակներից՝ Գյունե Ճարտար գյուղի մոտ գտնվող Կոհակ կոչվող պուրակը, Դաշուշեն գյուղից ներքև գտնվող Սարիբեկի սրբավայրը, ինչպես նաև Հադրութի և Սխտորաշենի նշանավոր չինարիները, որոնց բնակիչները դիմում էին տարբեր խնդրանքով:

Աղբյուրների պաշտամունքը կապվում է նրանց՝ այս կամ այն հիվանդությունը բուժելու զորությամբ: Այպես՝ Հյունոտ գյուղի մոտ գտնվող աղբյուրը բուժում էր քոսը, Ավետարանոց գյուղի մոտինը և Գիշի գյուղի Ոսկե խաչ աղբյուրը՝ դողերոցքն ու թրմորը, Կուսապատի մոտ գտնվող Յեղին ախպուրը՝ աչքացավը, Գյունե Ճարտարի Ուխտածաղիկ կամ Դավաչիչագ աղբյուրը՝ կարմրախտը: Որոշ աղբյուրների պաշտամունքի հիմքն էլ նրանց՝ հրաշքով առաջանալու հանգմանքն է: Ժողովրդի պատմելով՝ Եղիշե Առաքյալի վանքի մոտ բխող սուրբ աղբյուրը բխել է Վաչագան Բարեպաշտի ձեռքի մախաղի ջրի թափված տեղում, Խաչմաչ գյուղի մոտի աղբյուրը հորդել է հենց զանգակատանը, որտեղ աղոթող մայրը դիմել է Աստծուն՝ խնդրելով հագեցնել երեխայի ծարավը, Դիզափայտ լեռան լանջի Արջին աղբյուրը՝ ծարավից ուժասպառ արջի՝ երկնքից օգնություն խնդրելու արդյունքում:

Յուրահատուկ պաշտամունքի առարկաներ են *նահատակները*, որտեղ սովորաբար հանուն հավատի կամ կռվի ժամանակ առանց հաղորդության

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 53-55:
[2] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 55:
[3] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 55-60:
[4] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 55:

զոհվել կամ էլ կայծակից խոցվել են առանձին անհատներ: Նման վայրերից հիշատակվում են Կըզըկալա գյուղի մոտ՝ Մեծ և Փոքր, Փիր-Ջամալ գյուղի մոտ՝ Կսբե, Նախիջևանիկ գյուղի մոտ՝ Ճգնավորուհու, Նոր Քյաթուկ գյուղի մոտ՝ Սպիտակ հօլ, Դըրնավազ գյուղի մոտ՝ Աղին նըհատակ, Շուշու հին գերեզմանոցում՝ Թիֆլիսեցի նըհատակ Անտոնը, Կուսապատի մոտ՝ Ղարիբ խաչ և այլ սրբավայրերը:

Ըստ հաղորդման՝ Լեռնային Ղարաբաղում ամենուր պաշտում էին գերեզմանները՝ հավատալով, որ առանց հաղորդության հանկարծամահ եղածների գերեզմաններն ունեին բուժիչ հատկություններ: Նման զորություն ունեին նաև հերոսների և հրաշագործների գերեզմանները, ինչպես թուրք Սուլեյման բեկին սպանած օրիորդ Գայանեի գերեզմանը, Ննգի գյուղի քահանա Կարապետ Տեր-Պետրոսյանի տապանաքարը:

Դրանց զուգընթաց երկրպագվում էին որոշ կենդանիների գերեզմանները: Դրանցից հայտնի են Դիզափայտի լանջին կայծակից արջի խոցված տեղը, Պտղեսբերքում՝ Սուրբ Գրիգորի վանքի մոտ գտնվող գերեզմանը, որտեղ թաղված է վանքի կառուցմանը մասնակցած և իր փրկիչ կրոնավորի մահից հետո ինքնասպանություն գործած արջը, Կուսապատից արևելք գտնվող Եղին ախպուրը, որտեղ նետահարվել է կամավոր զոհաբերվելու նպատակով հայտնված եղնիկը:

Որպես երկրպագվող վայրեր են նշվում սուրբ օջախները, որոնք հանդիպում են գրեթե յուրաքանչյուր գյուղում և կրում են տոհմային անվանումներ, ինչպես Կուսապատում՝ Էրիցանց ու Վեղանց, Ծովատեղում՝ Բգերանց, Գյունե Ճարտարում՝ Միրզաբեկանց, Տողցոնց ու Խոջանց, Ննգիում՝ Դերանց և այլն:

«Պաշտամունքի ձևերը» բաժնում[1] Լիսիցյանը անդրադառնում է հասարակական ու մասնավոր մատաղներին և մոգական հնարներին: Նկարագրության համաձայն՝ հասարակական մատաղները արվում էին գյուղի բնակիչների կողմից՝ մեծ տոներին, սովորաբար՝ եկեղեցու մոտ, առանց եկեղեցական արարողության, ինչպես նաև երաշտի ու հասարակական այլ աղետների ժամանակ, իսկ մասնավոր մատաղները սովորաբար արվում էին աղոթատեղի մոտ, որոշ դեպքերում էլ՝ գյուղում՝ ծանր հիվանդի առողջացման կամ ուխտի առիթով, ընդ որում՝ տերտերի ներկայությունը պարտադիր չէր:

Մոգական հնարներից հիշատակվում են սրբավայրի հող, ջուր կամ թեփ մարմնին քսելը, մեջը սուրբ հող ու փոշի լուծած ջուր խմելը, սուրբ ծառերի ճյուղերից զգեստի կտորներ կախելը, սուրբ ծառերին մեխեր խփելը, *«կոխված»* երեխայի գլխավերևը ձեռքով երեք անգամ շրջագիծ շարժում անելը, սրբավայրի շուրջը երեք անգամ ծնկաչոք պտտվելը, սուրբ քարերի ճեղքերով անցնելը, նորածին արու զավակի պորտալարի մի մասը երևացող տեղ, իսկ աղջկանը՝

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 60-63:

հեռավոր մի անկյուն նետելը, թաղումից հետո ննջեցյալի սպիտակեղենը մաքուր լվանալը, գայլի երախը *«կապելը»*, ուրիշներին իր ունեցվածքի մասին տեղեկություններ չհայտնելը, օրորոցներից, երեխաների ուսաժապավեններից, անասունների վզից *աշկրհէլունքներ* կախելը և այլն:

Առանձին բաժիններով են ներկայացվում սատանաների՝ քաշկերի, սրբերի ծառաների նկարագրությունները, երդման ձևերը, տիեզերական հայացքները՝ երկնային լուսատուների, ինչպես նաև որոտի, կայծակի, ալեկոծության, ծիածանի, երկրաշարժի շուրջ եղած պատկերացումները:

«Տոները» խորագրի տակ[1] Լիսիցյանը հանգամանալից նկարագրում է ժամանակին տարածված նշանավոր տոները՝ Նավասարդը, Սուրբ Սարգիսը, Բարեկենդանը, Տեառնընդառաջը *(Դրոռոռանջ, Դանդոռանջ)*, Ծաղկազարդը *(Զրրրզարթար)*, Ավագ շաբաթը և Զատիկը, Համբարձումը, Պայծառակերպության օրը *(Վրրթէվոր, Վրրթէվար)*, անդրադառնում դրանց ընթացքում կատարվող ծեսերին, խաղատեսակներին, գործածվող կերակրատեսակներին:

Ամփոփելով հավատալիքների մասին իր ուսումնասիրությունները՝ հեղինակը նշում է, որ *«Լեռնային Ղարաբաղում դեռ խորհրդային շինարարությունը սկսվելուց շատ առաջ, կապված տնտեսական ու մշակութային պայմանների փոփոխության հետ, սկսել էին մոռացվել և այլափոխվել հին, նախնիներից ժառանգած հավատալիքները»*[2]:

Հարկ է նշել, որ *«Հավատալիքները»* գլխում ընդգրկված են բազմաթիվ ավանդություններ և ավանդազրույցներ, ինչպես նաև ասույթային բանաձևումներ, որոնք կարևոր նշանակություն ունեն Արցախի բանահյուսության ուսումնասիրության համար:

Աշխատության վերջին՝ *«Լեզուն և արվեստը»* գլուխը[3] նվիրված է Ղարաբաղի բարբառի, երաժշտության և պարերի համառոտ նկարագրությանը: Այստեղ հեղինակը անդրադառնում է արցախահայերի բարբառի քերականական և հնչյունական որոշ առանձնահատկությունների, ինչպես նաև մինչև այդ հրատարակված աշխատանքներին՝ նշելով, որ *«դեռևս չի հավաքված ողջ լեզվական նյութը, և փորձեր չեն արված՝ որոշելու բարբառի լեզվակազմը՝ դրանում պահպանված էթնիկական շերտավորումների բացահայտման նպատակով»*[4]:

Երաժիշտներից հիշատակվում են որոշ գուսանների անուններ՝ Ռուստամ, Սարգիս Ղզղալեցի, Գրիգոր Գալոյան և ուրիշներ, որոնց թիվը, սակայն, հետզհետե նվազում է: Նշվում է նաև, որ Ղարաբաղում համաժողովրդական

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 67-73:
[2] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 73:
[3] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 75-77:
[4] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 75:

զանգվածային ստեղծագործություններ, տեղական հերոսավեպ, տեղի հերոսների գովերգում չկա, թույլ է արտահայտված հայերեն զուտ քնարական ստեղծագործությունը՝ սիրահարական և ընտանեկան բնույթի երգերի տեսքով, հատկապես բացակայում է կանանց երգը, մինչդեռ ժողովրդական արձակ խոսքը գունեղ է, իսկ շվին արդեն անհետանում է:

Հաղորդման համաձայն՝ բազմազան չեն պարերը, վերացել են երբեմնի շուրջպարերը, եղած պարերը դանդաղ են, չկան թռիչքներ ու բացականչություններ: Ընդգծվում է, որ Ղարաբաղում ընդհանրապես պարում է ոչ թե տղամարդը, այլ կինը, այն էլ՝ չամուսնացած երիտասարդ կինը, իսկ քաղաքից վերադարձած պատանիներն ու երիտասարդները հին պարերի փոխարեն արդեն նախապատվությունը տալիս են այնպիսի ժամանակակից պարերի, ինչպիսիք են պոլկան, վալսը և մազուրկան:

1930-ական թվականներին՝ իր առաջին շրջագայությունից ավելի քան մեկ տասնամյակ անց, նշանավոր ազգագրագետը նորից է շրջագայում Լեռնային Ղարաբաղում՝ ստացած տպավորությունները շարադրելով որպես *«Լեռնային Ղարաբաղի հայերը»* աշխատության վերջաբան[1], որտեղ տրվում են 1920-ական թվականների կեսերից մինչև 1930-ական թվականների կեսերը երկրամասի հայերի կյանքում, կենցաղում, պատկերացումներում տեղի ունեցած մեծ փոփոխությունները՝ բնակչության թվի աճ, գյուղատնտեսության մեքենայացում, հիդրոէլեկտրակայանների, ջերմաէլեկտրակայանների, գործարանների կառուցում, ցանքատարածությունների ընդլայնում, անասունների գլխաքանակի ավելացում, շերամապահության, մետքսագործության, գորգագործության զարգացում, հին տների՝ ղարդամների փոխարեն երկհարկանի կողային պատուհաններով տների կառուցում, կրթական և մշակութային ցանցի ընդլայնում, ընտանիքում ու հասարակության մեջ կնոջ դերի բարձրացում և այլն, որոնք, ըստ հեղինակի, արդյունք են խորհրդային կարգերի հաստատման:

«Լեռնային Ղարաբաղի հայերը» աշխատությունը հագեցված է հեղինակի անձնական արխիվից, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ու Հայաստանի պատմության պետական թանգարանի ֆոնդերից ընտրված համապատասխան չափագրություններով, զարդանկարներով, լուսանկարներով, որոնց ընտրությունը, ինչպես նաև աշխատության հրատարակման հետ կապված գիտատեխնիկական աշխատանքները, կատարել է Ս. Լիսիցյանի թոռնուհին՝ ազգագրագետ Լիլյա Վարդանյանը, ով մեծ ավանդ ունի նշանավոր ազգագրագետի գիտական ժառանգության ուսումնասիրման գործում[2]: Հարկ է

[1] Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 77-82:

[2] Варданян Л., Степан Лисициан и истоки армянской этнографии, Ереван, 2005, Из истории этнографического изучения Нагорного Карабаха (конец XIX- начало XX вв.), «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան և ապագան.Միջազգային գիտաժողովի

նշել, որ Լ.Վարդանյանի խմբագրությամբ է տպագրվել նաև աշխատության ռուսերեն հրատարակությունը[1], որի *«Խմբագրի կողմից»* ներածականում բնութագրվում է մեծ ազգագրագետի գիտական կենսագրությունը: Աշխատությանը կցված է ազգագրական տերմինների բառարան և աշխարհագրական անունների, պատմական հուշարձանների ու տեղական սրբավայրերի ցանկեր՝ կազմված Լ. Վարդանյանի կողմից:

1920-ական թվականներին Լեռնային Ղարաբաղից գրառած նյութերը հիմք հանդիսացան Ս. Լիսիցյանի գիտական մեկ այլ կարևոր աշխատանքի, որտեղ տրված է արցախյան հնաձև ավանդական տան՝ *դարադամի* ուսումնասիրությունը[2]: Հոդվածի սկզբում անդրադառնալով հայկական գյուղական կացարանների մասին եղած նկարագրություններին՝ հեղինակը կարևոր ու անհետաձգելի է համարում այդ բնագավառի ուսումնասիրությունը, հատկապես, որ մի կողմից՝ Արևմտյան Հայաստանի հայկական բնակավայրերն գրեթե ամբողջովին վերացված են, իսկ մյուս կողմից՝ համատարած գետնափոր հին կացարանները լայն թափով փոխարինվում են նոր՝ կողային պատուհաններ ու թիթեղածածկ կամ կղմինդրածածկ տանիքներ ունեցող տներով: Լիսիցյանը նշում է նաև, որ, այնուամենայնիվ, 1924թ. ամռանը իրեն հաջողվել է Լեռնային Ղարաբաղի ծայրամասային որոշ գյուղերում հանդիպել հնագույն կառուցվածքով տների, որոնք կոչվում են *դարադամ (սև տուն)*, որի նկարագությունն էլ տալիս է սույն հոդվածում: Ըստ նկարագրության՝ դարադամները կառուցվում էին լեռան լանջին, այնպես, որ նրանց երեք պատերը գրեթե ամբողջությամբ թաղված էին հողի մեջ, և միայն առջևի մասը՝ դռնով և տանիքով, գտնվում էր բակից վերև: Այն հիմնականում ուներ քառանկյուն ձև՝ սովորաբար մինչև 12 արշին երկարությամբ կողմերով, իսկ պատերը, որոնցից միայն առաջինն էր կառուցվում հիմնավոր, ունեին 1,5 արշին հաստություն, ներսից պատված էին կավածեփով կամ գյաջով և ունեին խորշեր՝ *պատրհան*, որոնք ծառայում էին որպես բաց պահարաններ: Այնուհետև մանրամասնորեն նկարագրվում են չորս հաստ կաղնե սյուների վրա հենված տանիքի կառուցվածքը, երդիկը, դուռը, թոնիրը, հետևի պատի տակ սարքված քարե հարթակը, որի վրա շարում էին ամանեղենը, ալյուրի պատկերը, տարբեր իրեր և այլն: Պատկերվում է նաև դարադամի հատակագիծը:

զեկուցումների ժողովածու, հունիսի 21-24, 2006 թ.», Երևան, 2007, էջ 488-496, Степан Лисициан и основные проблемы армянской этнографии, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2015, N2, էջ 208-228 և այլն

[1] Лисициан С., Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк, Ереван, 1992

[2] Лисициан С., К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам), «Известия Кавказского историко-археологического института», Тифлис, 1925, т. 3, с. 97-108.

Լիսիցյանը նշում է, որ դարադամը հիմնականում ծառայում էր որպես ձմեռային կացարան, իսկ վաղ գարնանից մինչև ուշ աշուն ամբողջ ընտանիքն անց էր կացնում դարադամի առջևի մասում՝ 5-7 սյուների վրա կառուցված պատշգամբում, որի տանիքը նույնպես պատված էր հաստ կավացեխով, իսկ անասնագոմերը, որոնց նկարագրությունը նույնպես տրվում է հոդվածում, կառուցվում էին դարադամից ավելի հեռու: Հեղինակը համառոտ նկարագրում է նաև նոր տիպի տները, որոնք 20-րդ դարի 20-ական թվականներին արդեն գրեթե ամենուր փոխարինել էին հին կացարաններին: Միաժամանակ նա հանգում է այն եզրակացությանը, որ միայն ղարաբաղյան ղարադամի ուսումնասիրությունը հիմք է տալիս ասելու, որ դրանց և ժամատների հատակագծերը անմիջական կապ ունեն իրար հետ[1]:

1940 թ. Բաքվում տպագրվում է Վ. Պետրովի *«Этноботаника Нагорного Карабаха»* ուսումնասիրությունը, որի մասին Ս. Լիսիցյանը հանդես է գալիս գրախոսականով[2]: Թվարկելով ուսումնասիրության արժանիքները և այն ընդգրկված նյութով ու այդ նյութի ուսումնասիրության համար գործածված մեթոդներով համարելով Ղարաբաղի գիտական պատմության համար կարևոր՝ նշանավոր ազգագրագետը ներկայացնում է նաև նրանում տեղ գտած որոշ թերություններ և բացթողումներ:

Արցախի ազգագրությանը անմիջականորեն առնչվում է Ս. Լիսիցյանի *«Զանգեզուրի հայերը»* կոթողային աշխատությունը[3], որտեղ ազգագրական տարբեր երևույթներ ու հարցեր քննելիս ու նկարագրելիս նա հաճախ է համեմատում Արցախի հետ՝ ընդգծելով դրանց ընդհանրություններն ու յուրահատկությունները:

Թերևս այս ամենին հարկ է ավելացնել նշանավոր *«Ազգագրական հարցարանը»*[4], որով տասնամյակներ շարունակ բազմաթիվ ազգագրագետներ, ինչպես հայ ազգագրական մյուս շրջաններից, այնպես էլ Արցախից հավաքել և ներկայումս էլ գրառում են ազգագրական կարևոր նյութեր:

Եվ ընդհանրապես, Ս. Լիսիցյանի ազգագրական ողջ ժառանգությունը անփոխարինելի հիմք է Արցախի ժողովրդագիտության ուսումնասիրության համար:

---

[1] Նույն տեղում, էջ 108:

[2] Лисициан С., О книге В. А. Петрова «Этноботаника Нагорного Карабаха», изд. АЗФАН, Баку, 1940, «Տեղեկագիր ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի», Երևան, 1942, N1-2, էջ 187-190:

[3] Լիսիցյան Ս., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969

[4] Լիսիցյան Ս., Ազգագրական հարցարան, Երևան, 1946

Ամփոփում

Հոդվածում վեր են լուծվում հայ նշանավոր ազգագրագետ Ստեփան Լիսիցյանի՝ Արցախին նվիրված ուսումնասիրությունները: Առանձնապես մեծ տեղ է հատկացվում նրա «Լեռնային Ղարաբաղի հայերը» ազգագրական ուսումնասիրությանը, որը հիմնված է 1920-ական թվականներին հեղինակի գրառած դաշտային նյութերի վրա և ներկայացնում է արցախահայերի տնտեսական զբաղմունքը, նյութական և հոգևոր մշակույթը, հավատալիքները և ընդհանրապես՝ նիստուկացը:

Этнография, фольклор и диалект Арцаха в исследованиях Степана Лисициана

А. Саркисян

Резюме

Ключевые слова: *этнография, фольклор, диалект, исследование, статья, город, деревня, семья, свадьба, похороны, легенда.*

В данной статье рассматриваются исследования известного армянского этнографа Степана Лисициана, посвященные Арцаху. Особенно большое место выделено его этнографическому исследованию «Армяне Нагорного Карабаха», которое основано на полевых материалах, собранных автором в 1920-х годах и представляет хозяйство, материальную и духовную культуру, верования и быт армян Арцаха.

Artsakh Ethnography in the works of Stephen Lisitsian

A. Sargsyan

Resume

Key words: *ethnography, folklore, dialect, collection, research, article, town, village, family, wedding, burial, tradition.*

In this article the works of Armenian famous ethnographer Stephen Lisitsian which are devoted to Artsakh are analyzed. Special attention is paid to his ethnographical research of «Armenians of Nagorno Karabakh» based on the field materials written down by the author during the 1920s which represented the economical duties, material and spiritual culture and the daily life of Artsakh people.